ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Գարնանային բաճկոն՝ հանովի ուսադիրներով Գարնանային բաճկոնի ձևը, դետալների տեղադրությունը և օգտագործված նյութերը համաձայն ներկայացվող նմուշի չափանիշների: Բաճկոնի օձիքը, թիկունքը, լանջափեշերը և թևքերը կարվում են 100% պոլիէսթեր, 260 գ/մ2 բաղադրությամբ, անջրանցիկ մուգ կանաչավուն (ըստ նմուշի) կտորից: Բաճկոնը կոճկվում է կենտրոնական տրակտոր տեսակի, համար 6 պլաստմասե շղթայով, ստորին հատվածում, շղթայի ներքին մասի զարդակարված երկայնակի կափույրին առկա է լրացուցիչ ամրություն ապահովող մետղական կոճգամ: Բաճկոնին զսպանակավոր, փթքր գլխիկով շղթայի միջոցով ամրացված է ռեզիններով կարգավորվող, ձևավոր, մետաղական ներդիր պարունակող հովհարով գլխանոցը: Գլխանոցը աստառով է, դիմացից կոճկվում է ինքնակպչուն-ներով: Օձիքը՝ լայն, կանգուն տեսակի, շղթայի երկկողմանի պաշտպանիչ կափույրով: Բաճկոնը դիմային և թիկունքային կոկետկաներով է, ուսագոտին `ձևավոր: Ձախ լանջափեշի վերին ներքին հատվածում՝ կենտրոնական շղթային զուգահեռ, 1.5-2.5 սմ հեռավորության վրա 16-18 սմ երկարությամբ շղթայով փակվող գաղտնի գրպանն է: Լանջափեշերի ստորին, երկու կողային հատվածներում, կենտրոնական կոճկվող շղթային զուգահեռ, պլաստմասե շղթայով փակվող գրպաններ են (լուսանցքը՝ 21-23 սմ): Թևքերի ձևը նեղ թեզանիքներով, կարգավորվող ինքնակպչուններով, էլաստիկ ժապավենով պատաններ են : Աստառը՝ սև կամ մուգ կանաչավուն մետաքսյա, 70 գ/մ2 խտությամբ կամ ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ВШ արտիկուլի կամ համարժեք մուգ կանաչավուն գույնի 100 % վիսկոզա գործվածքից: Մզդակարը շեղանկյուն 8սմ քայլով է: Բաճկոնը 2 հատ ծոցագրպաններով է, որոնք փակվում են (կոճկվում են) ձախը՝ շղթայով իսկ աջը կոճակով:

	Բաճկոնի առաջամասի և հետնամասի ներդիրը մշակվում է քամիապաշտպան կտորով մգդակված 200 գ/մ2 խտությամբ սինտիպոնով, իսկ թևքերը և գլխանոցը 120 գ/մ2 սինտիպոնով: Երկու թևքերին՝ դեպի ներս, ուղղահայաց շղթայով փակվող գրպաններ են, ձախ թևքի ուսագլխից 90 մմ ներքև ասեղնագործ, սեպաձև տեսքով 7.0×9.0 սմ չափսի, ՀՀ ԱԱԾ թևքանշանն է, իսկ ձախ կրծքամասին՝ 2,5*12,5սմ չափսի ՀՀ ԱԱԾ գրվածքը: Ուսադիրների շրջանում առկա են երկուական 3,0 սմ-անոց փակօղակներ և կոճակ օղակներ՝ ուսադիրների ամրացման համար: Պիտակավորումը: Բաճկոնի ձախակողմյան փեշին, ներքևի եզրից 5.0-7.0 սմ բարձրության վրա, ներսի կողմից պետք է կարված լինի պիտակ: Պիտակի վրա նշված՝ տեսականու չափսը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը : Բաճկոնի շղթայի գլխիկից պետք է կախված լինի չափս-հասակային ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 5-6 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	